ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ

ք. Երևան **«26» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 665 690 000 (վեց հարյուր վաթսունհինգ միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, որից 110 948 333 (մեկ հարյուր տաս միլիոն ինը հարյուր քառասունութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:
Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823 ---------- /ստորագրություն/ Կ.Տ	<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ Հ/Հ 2050122011531001 ՀՎՀՀ 05800698 ---------- (ստորագրություն) Կ.Տ

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված թիվ 1
«26» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-32, Մ-1-Գյումրի-Կապս-Ամասիա հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ12+000+կմ17+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
I	**Նախապատրաստական աշխատանքներ**				
1	ՊԿ6+18 ձախից ԷՀԳ հենասյան տեղափոխում (ե/բ հենասյուն)	հատ	1	29.700	29.700
				I.Ընդամենը	**29.700**
II.	**Հողային աշխատանքներ**				
1	III8վ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	1080	0.484	522.720
2	Նույնը IV 6գ գրունտը	$մ^3$	460	0.883	406.180
3	Նույնը նախօրոք փխրեցրած VII20ա գրունտը	$մ^3$	70	0.883	61.810
4	III8վ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով , բարձում էքսկավատորով (0,65$մ^3$), տեղափոխում լիցք 1,0կմ	$մ^3$	360	1.708	614.880
5	Նույնը IV 6գ գրունտը	$մ^3$	180	2.300	414.000
6	Նույնը նախօրոք փխրեցրած VII20ա գրունտը	$մ^3$	250	3.336	834.000
7	III8վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65մ3), տեղափոխում լցակույտ 10.0կմ	$մ^3$	610	2.489	1 518.290
8	III10դ գրունտի մշակում և տեղափոխում պահուստից 5.0կմ-ից լիցքի իրականացման համար	$մ^3$	440	1.919	844.360
9	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	$մ^3$	4800	2.549	12 235.200
10	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	2950	0.730	2 153.500
11	Լեռնային ապարների փխրեցում պայթանցքային լիցքերով 0.5-1.0մ պայթանցքի խորությամբ VII 20ա գրունտը	$մ^3$	320	2.860	915.200
12	Դարակների իրականացում փափուկ գրունտներում	$մ^3$	140	3.024	423.360
				II.Ընդամենը	**20 943.500**
III.	**Ճանապարհային պատվածք**				
1	Գոյություն ունեցող քայքայված ա/բ պատվածքի քլնգում(кирковка) ,խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	963	0.759	730.917

2	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^2$	61880	0.572	35 395.360
3	Չափազատված խիճ h=16սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$	$մ^2$	38998	3.685	143 707.630
4	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	$մ^2$	37796	6.145	232 256.420
5	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	$մ^2$	37796	4.563	172 463.148
				III.Ընդամենը	**584 553.475**
IV.	**Կողնակներ**				
1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 6.0կմ-ից կողնակների իրականացման համար	$մ^3$	3005	2.007	6 031.035
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=16սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	3005	0.841	2 527.205
3	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	$մ^2$	18779	0.671	12 600.709
				IV.Ընդամենը	**21 158.949**
V.	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	$մ^3$	3.3	6.091	20.100
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	38	29.946	1 137.948
3	Գլխադիրների միաձույլ բետոն B15	$մ^3$	3.75	110.500	414.375
4	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	38.8	1.835	71.198
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^2$	813.0	0.545	443.085
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$	$մ^2$	761.0	3.197	2 432.917
7	Տաք,մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	$մ^2$	1376.0	4.510	6 205.760
				V.Ընդամենը	**10 725.383**
VI.	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**				
1	Տարբեր բացվածքներով խողովակների մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 10.0կմ	$մ^3$	66.0	9.100	600.600
2	d=720մմ մետաղական խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15	$մ^3$	4.06	110.500	448.630
3	Նույնը d=920մմ մետաղական խողովակի համար	$մ^3$	0.80	110.500	88.400
4	Նույնը d=1820մմ մետաղական խողովակի համար	$մ^3$	9.82	110.500	1 085.110
5	Նույնը d=0.75մ ե/բ խողովակի համար	$մ^3$	2.37	110.500	261.885
6	Նույնը d=1.0մ ե/բ խողովակի համար	$մ^3$	2.0	110.500	221.000
7	d=720մմ մետաղական խողովակների գլխադիրի թևերի միաձույլ բետոն B12.5	$մ^3$	1.7	63.059	107.200
8	Նույնը 2x2մ բացվածքով ե/բ խողովակի համար B15	$մ^3$	2.05	67.171	137.701
9	d=720մմ մետաղական խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնով B12.5	$մ^3$	2.0	76.583	153.166
10	d=920մմ մետաղական խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնով B12.5	$մ^3$	1.2	76.583	91.900
11	d=1820մմ մետաղական խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնով B15	$մ^3$	3.62	80.773	292.398
12	d=1.0մմ մետաղական խողովակի վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնով B12.5	$մ^3$	1.2	75.583	90.700
				VI.Ընդամենը	**3 578.689**
VII	**ՊԿ34+29 d=2x1429մմ մետաղական խողովակի գլխադիրների մասում քանդված պատի վերականգնում միաձույլ բետոնով**				

1	Հունի մաքրում	$մ^3$	120.0	0.468	56.160
2	Գլխադիրների մասում քայքայված բետոնի քանդում էքսկավատորով (0.65$մ^3$), բարձում, տեղափոխում լցակույտ 10կմ	$մ^3$	67.0	3.424	229.408
3	Գոյություն ունեցող խողովակի մաքրում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 10.0կմ	$մ^3$	10.0	9.098	90.980
4	Գոյություն ունեցող գլխադիրի մասի պատի վերականգնում միաձույլ բետոնով B20	$մ^3$	76.65	114.527	8 778.495
5	Գոյություն ունեցող պատի վերականգնում միաձույլ բետոնով δ=20սմ հաստությամբ B20	$մ^3$	30.0	71.100	2 133.000
6	Նոր մետաղական կիսախողովակի տեղադրում d=530մմ; 1գծ.մ=45.15կգ; δ=7մմ , ձախ կողմից, ելքի գլխադիրի վերջում, որպես ջրթող	գծ.մ	10.0	34.910	349.100
7	Կիսախողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	16.64	1.839	30.601
8	Ավազակոպճային շերտ խողովակի տակ h=10սմ	$մ^3$	1.0	6.100	6.100
9	Խարսխաձողեր AIIIØ16մմ	կգ	15.15	0.574	8.696
10	Միաձույլ բետոն B15	$մ^3$	0.09	54.444	4.900
				VII.Ընդամենը	**11 687.440**
VIII	**Եզրապատեր հիմքով ՊԿ41+20-ՊԿ43+60**				
1	Լեռնային ապարների փխրեցում պայթանցքային լիցքերով 0.5-1.0մ պայթանցքի խորությամբ VII 20ա գրունտը	$մ^3$	288.0	2.860	823.680
2	Նախապես փխրեցրած VII20ա գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (0.65$մ^3$), տեղափոխում լցակույտ 10կմ	$մ^3$	250.0	3.424	856.000
3	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	$մ^3$	38.0	1.108	42.104
4	Ավազակոպճային շերտ եզրապատերի տակ h=20սմ	$մ^3$	50.80	6.748	342.798
5	Եզրապատի հիմքի խամքարե բետոն B20	$մ^3$	199.45	55.575	11 084.434
6	Եզրապատեր խամքարե բետոնից B20	$մ^3$	55.84	56.537	3 157.026
7	Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	362.50	1.244	450.950
8	Եզրապատի սվաղում և ներկում	$մ^2$	407.0	3.051	1 241.757
9	Հետադարձ լիցք	$մ^3$	38.0	0.105	3.990
				VIII.Ընդամենը	**18 002.739**
IX	**Ճանապարհի կահավորում**				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
1	Նախազգուշացնող	հատ	18	48.461	872.298
2	Առավելության	հատ	32	53.131	1 700.192
3	Տեղեկատու ցուցիչ	հատ	2	34.800	69.600
Բ.	**Արգելափակոցներ**				
1	Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով(սյուների քանակը -478հատ, վերջնական տարր -16հատ/160կգ; անկյունագծային կապ 96հատ/512.4կգ, պողպատե թիթեղ d =4մմ)	գծ.մ	1680.0	20.806	34 954.080
	ավազակոպիճ	$մ^3$	15.5	3.335	51.693
2	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	416	5.852	2 434.432
3	Նոր եզրապատեր խամքարե բետոնից				0.000
.	Եզրապատի հիմքի խամքարե բետոն B20	$մ^3$	16.80	55.574	933.643
.	Եզրապատեր խամքարե բետոնից B20	$մ^3$	20.48	56.537	1 157.878
.	Եզրապատի սվաղում և ներկում	$մ^2$	148.48	3.051	453.012

4	Գոյություն ունեցող եզրապատերի նորոգում				
	Եզրապատերի բարձրացում միաձույլ բետոնով B20	$մ^3$	6.48	71.100	460.728
	Եզրապատի սվաղում և ներկում	$մ^2$	109.92	3.051	335.366
Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1$մ^2$**				
	1.1	կմ	2.263	141.626	320.500
	1.5	կմ	1.607	62.477	100.401
	1.6	կմ	1.177	115.208	135.600
	1.2.1	կմ	9.852	247.320	2 436.597
	1.18	$մ^2$	12.10	2.223	26.898
				IX.Ընդամենը	**46 442.917**
X	**ՊԿ40+51-ում 3x12.0մ թռիչքով Գ-6.65մ գաբարիտով, 0.75մ մայթերով կամրջի վերականգնում**				
I	**Քանդման աշխատանքներ**				
1	Թռիչքային կառուցվածքի երթևեկելի մասի քանդում h=10սմ, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 10.0կմ	$մ^2$	246.0	0.914	224.844
2	Նույնը բետոնե ամրանավորված պաշտպանիչ շերտը h=4սմ	$մ^2$	231.3	0.300	69.390
3	Նույնը ջրամեկուսիչ և հարթեցնող շերտերը հմիջ.=7սմ	$մ^2$	307.0	0.515	158.105
4	Մետաղական բազրիքների ապատեղակայում, բարձում, տեղափոխում բազա	տոն	0.665	29.774	19.800
5	T1-1.0 մայթի բլոկների ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 10.0կմ V=0.75$մ^3$, G=1.92տոն	$մ^3$	18.0	19.944	358.992
6	Դեֆորմացիոն կարերի քանդում	գծ.մ	38.2	12.615	481.893
7	Ջրթող խողովակների համար ե/բ հեծանների մեջ անցքերի փորում d=200մմ ,L=150մմ չափով (ուղղահայաց)	հատ	12	1.125	13.500
II	**Վերականգնման աշխատանքներ**				0.000
1	Թռիչքային կառուցվածքի հավասարեցնող շերտ h=3-11սմ ավազացեմենտե շաղախով	$մ^2$	307	3.354	1 029.678
2	Ջրամեկուսացում „техноэласт Б" ով h=1սմ,	$մ^2$	307	8.084	2 481.788
3	Բետոնե ամրանավորված պաշտպանիչ շերտ երթևեկելի մասում h=4սմ B25	$մ^2$	231.3	2.464	569.923
	Ցանց ամրանային 100x100մմ;Ø5Bp	$մ^2$	231.3	2.649	612.714
4	T1-0.75 մայթի բլոկների տեղակայում	հատ	24.0	330.187	7 924.488
5	Ավազացեմենտե շաղախ մայթի բլոկների տակ h=1.0սմ	$մ^2$	73.8	0.480	35.424
6	4x4սմ կտրվածքով ծակոտկեն ռետին	կգ	45.216	0.741	33.505
7	Դեֆորմացիոն կարերի իրականացում /4 հատ/	գծ.մ	38.0	96.482	3 666.316
	Լրացուցիչ բետոն B30	$մ^3$	0.65	68.308	44.400
	Ամրան AI	տոն	0.1943	587.236	114.100
	Ներդիր էլեմենտներ	տոն	0.317	760.568	241.100
8	d=150մմ , L=0.8մ թուջե ջրթող խողովակների տեղադրում	լրակ.	12.0	21.192	254.304
9	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	$մ^2$	246	4.512	1 109.952
10	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=3սմ	$մ^2$	246	3.457	850.422
11	Մայթերի ավազահատիկ ա/բետոնի պատվածքի իրականացում h=4սմ	$մ^2$	54.0	4.757	256.878
12	Նոր մետաղական բազրիքների տեղակայում, ներկում - 24հատվածամաս L=3.0մ	տոն	1.52712	749.843	1 145.100
13	Թռիչքային կառուցվածքի մերկացած ամրանների մաքրում ժանգից բարձր ճնշման ավազեշիթով և տորկրետ բետոնով h=5սմ	$մ^2$	41	10.193	417.913

14	Նույնը ուղղորդող պատը	$մ^2$	32	10.191	326.112
15	Անվահրիչների ներկում	$մ^2$	97	1.052	102.044
				Հ.Ընդամենը	**22 542.685**
				Ընդհանուրը	**739 665.477**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը»՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122011531001
ՀԿՀՀ 05800698

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«16» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ-32, Մ-1-Գյումրի-Կապս-Ամասիա հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ12+000+կմ17+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 25 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 85 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Ուղիներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Խողովակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 45 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Եզրապատեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
8	Կամուրջ (ՊԿ40+51-ում)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
9	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122011531001
ՀԿՀՀ 05800698

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«26» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«26» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

26.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ պետական գնման պայմանագրի

ք. Երևան

<< 18>> հոկտեմբերի 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 03-ի թիվ 1331-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 26.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/13Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
ՀՎՀՀ 02578338	Հ/Հ 2050122011531001
ՀՀ 90001025823	ՀՎՀՀ 05800698
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱԵՁԲ-2019/13Շ գնման պայմանագրի
«18» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ՝

Հ-32, Մ-1-Գյումրի-Կապս-Ամասիա հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ12+000+կմ17+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

Երաշխիքով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231177/79	Հ-32, Մ-1-Գյումրի-Կապս-Ամասիա հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ12+000+կմ17+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների									665 690 000	665 690 000	665 690 000	665 690 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
հ/հ 900011025823

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Մերիմոսկովյան» ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
հ/հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698

/ստորագրություն/